

ԿԿՈՒ
ՄԱՆԿԱԴԱՏԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻԿ



ԹԻՒ 23



ՅՈՒՆԻՍԲ. 2019

ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՓՐԿԷ

Ծովուն մէջ փոթորիկ էր, ալեկոծութիւն: Մարդ մը տախտակ մը բռնած ուժասպառ, կը պայքարէր ալիքներուն դէմ: Յանկարծ նաւ մը կը մօտենայ անոր ու կ'ուզէ փրկել խեղդուողը:

- Շնորհակալ եմ, փրկարար Աստուածս զիս կը փրկէ, հեռացէ՛ք, - կ'ըսէ ան:

Քիչ յետոյ խեղդուողին կը մօտենայ երկրորդ նաւ մը, ապա՝ երրորդ մը, սակայն մարդը նոյն պատասխանը կու տայ բոլորին:

Գիշերուան լռութեան մէջ, մարդը խեղդուելու ատեն, բարձրաձայն կ'անիծէ զԱստուած:

Յանկարծ երկինքէն ձայն մը կը լսուի, որ կ'ըսէ.

- Յիմա՛ր, քեզի խղճացի ու երեք նաւակ դրկեցի, որ պէսզի փրկուիս, իսկ դուն օգնութենես հրաժարեցար: Ի՞նչ ընէի...



ԱՆԱՍՈՒՆՆԵ՛ՐՆ ԱԼ ՏԱՔԷՆ ԿԸ ՏԱՌԱՊԻՆ



Բոլոր անասունները նոյն ձեւով չեն հակազդեր տաք եղանակին: Կարգ մը անասուներ տաքը կը փնտռեն, մինչ ուրիշներ կը խուսափին անկէ:

Արեւ եւ Վերապրում

Կարգ մը պաղ արիւնով անասուններ (որոնց արիւնին ջերմաստիճանը կը փոխուի), ինչպէս՝ մողէզները կամ օձերը, տաքը կը սիրեն: Անոնց համար արեւը եւ անոր հայթայթած ջերմութիւնը իրենց կեանքին համար անհրաժեշտ են: Բազմանալու, մարսելու կամ տեղափոխուելու համար անոնց մարմինը պէտք է հասնի առաւելագոյն ջերմաստիճանին: Անոնք արեւը կը փնտռեն:

Արեւը Շատ Տաք Է

Ուրիշ անասուններու պարագային հակառակը կը պատահի: Անոնք արեւը չեն սիրեր եւ կը հեռանան նուազագոյն տաքութենէն: Այս է պարագան շուներուն եւ կատուներուն: Այս անասունները մորթին տակ գտնուող եւ քրտնիլը դիւրացնող շատ քիչ գեղձեր ունին: Չտեսւաբար անոնք նուազ կը քրտնին: Ի՞նչ լաւ՝ պիտի ըսէք դուք: Ո՛չ անպայման, որովհետեւ քրտինքը շատ յատուկ պաշտօն մը ունի, ան մարմինին պաղելու կարելիութիւնը կու տայ, երբ ջերմաստիճանը շատ բարձր ըլլայ:

Այս պատճառով է, որ շունը իր լեզուն դուրս կը հանէ եւ իր շնչառութիւնը կ'արագացնէ, երբ շատ կը տաքնայ: Այս ձեւով ան դուրս կը հանէ տաքութիւնը եւ իր մարմնին ջերմաստիճանը քիչ մը կը նուազեցնէ:



Շիբե ՊԱՏՐԱՍՏԵՆ՝ ՈՒՅՆ ԿՈՒՆԵՆ-ՏԻՐՄԻՔԵՆԱՆ
ՆԿԱՐԱՇԱՐՈՒՄԵՆ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇՈՒՄԵՆԱ

ԱՆՅԱԻԱՏԱԼԻ, ԲԱՅՑ ԻՐԱԿ

* 60 միլիոն տարի առաջ պզտիկ ինքնաշարժի մը մեծությամբ կրիաներ կը շրջէին երկրագունդին վրայ:

* Անգլիոյ մէջ «Շեթլընտ Փոնի Կրանտ Նասիոնալ» ձիերու մրցումին մասնակցողները պետք է 8-13 տարեկան ըլլան եւ անոնց հասակը չանցնի 1.5 մետրը:

* Կոկորդիլոս մը կրնայ շանաձուկ մը ուտել:

* Կարգ մը սարդերու ուղեղը կը հասնի մինչեւ անոնց ոտքերուն մէջ:

* Գիտէի՞ր, որ կարելի է գնել 25 հազար տոլար արժող շունի տնակ մը օտոուած *էրոնտիշըններով* եւ երաժշտութիւն սփռող դրութեամբ:

* Վարունգի մը ներսի բաժինը կրնայ 11.1 աստիճան աւելի պաղ ըլլայ, քան՝ անոր դուրսի բաժինը:

* 8-րդ դարուն Ճափոնի Թոտայնի տաճարին շինութեան աշխատանքները կատարած է 2.6 միլիոն անձեր:

* Իտալացի խոհարար մը կը պատրաստէ *պասքեթ-պոլի* մարգակօշիկի ձեւով սուշի:



Կրնա՞ս հաւասարեցնել նժարները


Իւրաքանչիւր կշիռքի նժարները հաւասարեցնելու համար փորձէ՛ գտնել հարցման նշանները փոխարինող թիւերը:

1	?	20	2	?	18
	45	50		44	40
	15	30		12	22
3	?	25-12	4	?	3x9
	42-28	36-16		4x5	4x3
	26-13	15-8		3x6	3x5

4.-16
3.-13
2.-24
1.-40
մզկոմոլոտուս

Կրնա՞ս գտնել ելքի ճամբան:

Ներկէ՛ նախասիրած գոյներով:



ՄՐՋԻՆՆ ՈՒ ԼՈՒՆ

Ղազարոս Աղայեան



Մրջինն ու լուն եղբայրացան եւ միասին գացին դաշտ՝ զբօսելու: Այդ-տեղ անոնց դէմ ելաւ առու մը:

Լուն ըսաւ.

- Ես մէկ ոստումով կրնամ թռչիլ առուին մէկ կողմէն միւսը, իսկ դուն ի՞նչ կրնաս:

- Ես ալ կրնամ ցատկել,- ըսաւ մրջինը:

Լուն կծկուեցաւ, ամբողջ ուժը հաւաքեց ու յանկարծ թռաւ առուին միւս ափը: Մրջինը նմանապէս հաւաքեց ամբողջ ուժը, ցատկեց, բայց ինկաւ առուին մէջ: Անոր բախտէն՝ ջուրին մէջ խոտի թուփ մը բուսած էր: Ինկաւ խոտին վրայ եւ ազատեցաւ խեղդուելէ, բայց տեսաւ, որ պիտի չկարենայ ցատկել միւս կողմը, կանչեց լու եղբայրը եւ ըսաւ.

- Սիրելի՛ եղբայր, ջուրը կը բարձրանայ ու կը խեղդէ զիս, ճա՛ր մը գտիր ու այդ փորձանքէն ազատե՛ զիս:

Լուն թռչկոտելով գնաց խոզին ու ըսաւ.

- Խոզո՛ւկ, խոզո՛ւկ, մագի՛կ մը տուր, մագէն պարան շինեմ, պարանը նետեմ առուին մէջ ու մրջին եղբայրս ազատեմ:

Խոզը պատասխանեց.

- Եթէ ինծի կաղին բերե՛ս...

Լուն թռչկոտելով հասաւ կաղնիին ու ըսաւ.

- Կաղնի՛, կաղնի՛, կաղնի՛ն տուր, կաղինը տամ խոզուկին, խոզուկը ինծի մագիկ տայ, մագէն պարան մը շինեմ, պարանը նետեմ առուին մէջ, մրջին եղբայրս ազատեմ:

Կաղնին պատասխանեց.

- Եթէ ագռաւը ճիւղիս վրայէն քշե՛ս...

Լուն թռչկոտելով հասաւ ագռաւին ու ըսաւ.

- Ագռա՛ւ, ագռա՛ւ, հեռացի՛ր կաղնիէն, կաղնին ինծի կաղին տայ, կաղինը տամ խոզուկին, խոզուկը ինծի մագիկ տայ, մագէն պարան մը շինեմ, պարանը նետեմ առուին մէջ, մրջին եղբայրս ազատեմ:

- Եթէ ինծի հաւու ձագուկ բերե՛ս...

Լուն թռչկոտելով հասաւ, հաւուն եւ ըսաւ.

- Հաւի՛կ, հաւի՛կ, ձագուկ տուր, ձագուկը տամ ագռաւին, ագռաւը հեռանայ կաղնիէն, կաղնին ինծի կաղին տայ, կաղինը տամ խոզուկին, խոզուկը ինծի մագիկ տայ, մագէն պարան մը շինեմ, պարանը նետեմ առուին մէջ, մրջին եղբայրս ազատեմ:

Բառեր

Լու- շատ պզտիկ միջատ մը
Թռչկոտելով- փոքր թռիչներ կատարելով

(Շարունակելի)

ՀԵՏԱՔՐԵՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ



Չհալող Պաղպաղակը

Ամրան տաքին պաղպաղակ մը ուտելը մեծ հաճոյք է, նոյն ատեն՝ խրթին, որովհետեւ անկարելի է գայն ուտել առանց մատները հալած պաղպաղակով ծածկելու:

Սակայն այս հարցը այլեւս լուծուած է շնորհիւ Սկոպտիոյ Էտինպրայի համալսարանէն խումբ մը գիտնականներու գիտին: Անոնք գտած են «կախարդական» փրոթէին մը՝ Պիես Այեյ-ը որ կը կառչի իւղի եւ շուրի կաթիլներուն եւ անոնց բաժանումը շատ անելի կը դժուարացնէ: Արդիւնք՝ պաղպաղակը դիւրութեամբ չի հալիր:



Ձայնաւոր ճաշացուցակ

Լիոնի մէջ, Ֆրանսա, կարգ մը ճաշարաններ սկսած են գործածել այս ձայնաւոր ճաշացուցակները: Խոհարարները պզտիկ մեքենայի մը վրայ կ'արձանագրեն իրենց ճաշացուցակին բաղադրութիւնը: Այս ձեւով յաճախորդները ճաշացուցակը կարդալու փոխարէն՝ մտիկ կ'ընեն:

Այս ձայնաւոր ճաշացուցակը ուղղուած է կոյր անձերուն: Մեքենան ունի բջիջային հեռաձայնի մը չափը:



Աշխարհի Ամենէն Չանդարտ Գործը

Անգործ իրլանտացիները, որոնք կը կարդային ծանուցումներ՝ գործ մը գտնելու համար, շատ հետաքրքրական ծանուցումի մը հանդիպած են:

Տապիլն մայրաքաղաքի անասնաբուժարաններէն մէկը կը փընտռէ կատուները շոյող մասնագետ անձ մը: Ան իր օրերը պիտի անցընէ կատուները շոյելով եւ անոնց մլաւոցները բացատրելով, որպէսզի անասնաբուժները վստահ ըլլան, որ բոլոր անասունները հանգիստ են:



Անիւներու Խաղաղայրը

Ճափոնի մայրաքաղաք Թոքիոյի «Նիշի Ռոքուկօ» խաղաղայրին մէջ մօտաւորապէս 3000 հին ինքնաշարժներու եւ փոխադրակառքերու անիւները գործածուած են շինելու համար օրօրոցներ, անցքեր, լեռներ, աշտարակներ, վիշապներ եւ մարդամեքենաներ:

